

ԵՌԱԲԼՈՒ

ԴՈՒ ՉՆԱՅԻՐ ՀԱՂԹԱԾ

(ԼՐԱՑԱՎ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵԿ ՏԱՐԻՆ)



Մեկտեմբերի 27-ին լրացավ 44-օրյա պատերազմի մեկ տարին: Այս օրերին մեր հատուկ թղթակից Սոնա ՎԱՆՈՂԵՑՅԱՆԸ գտնվում է հայրենիքում և հանդիպումներ է ունենում գնդված հերոսների հարազատների հետ: «Եռաբլուր» շարքից ներկայացնում ենք հազարավոր գոհերից մեկին ՎԱՆՈՂԵ ՎԱՆՐԱՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ:

Վանուշ Վահրամի Հարությունյանը ծնվել է 2002 թ. Վայոց Ձորի մարզի Վերնաշեն գյուղում Վահրամ և Լայա Հարությունյանների ընտանիքում: Շատ սպասված էր Վանուշի լույս աշխարհ գալը: Երկու քույրերից հետո ծնվել էր արու զավակ: Վանուշի ծնունդը վերածվեց ուղղակի հարսանիքի ու համագյուղական տոնախմբության: Տատիկը Սոֆյան, ով անժամանակ կորցրել էր ամուսնուն անչափ ուրախացավ, երբ նորածինն պապիկի անունով Վանուշ կոչեցին: Հետո հիբր, ուր ծնվեց Վանուշը, գյուղի և մարզի հարգված ու սիրված ընտանիքներից էր: Չնորհաշատ, մարդասեր, բարեկիրթ, աշխատասեր: Նա մեծացավ անսահման սիրով ու հոգատարությամբ շրջապատված: Շուտով

ուշիմ ու խելացի տղան դարձավ դարձավ բոլորի սիրելին, իր բարությամբ ու շրջապատում գրավեց թե՛ ընկերների, թե՛ ուսուցիչների սերն ու վստահությունը: Վանուշը մասնակիցն ու կազմակերպիչն էր բոլոր համադարձական միջոցառումների: Շատ էր սիրում ներկայացումներ բեմադրել և ինքը շատ հաջող խաղում էր գլխավոր դերերում: Նա ակտիվ էր բոլոր հարցերում, հատկապես գյուղին, դպրոցին վերաբերվող: Վանուշի նախաձեռնությամբ կազմակերպվեց Մխիթար Մեթաստացու անվան դպրոցի մի խումբ սաների այցը Վերնաշենի դպրոց, ապա հյուրընկալությունը իր հայրական հարկի տակ: Նույն հաջողությամբ կազմակերպվեց իր և դասընկերների այցը Բլեյանի դպրոց: — Բլեյանի դպրոցից վերադարձավ շատ ոգևորված, — պատմում է մայրը Լայան, — ասաց, — մամ ջան, որ իմանաս, թե ինչ նոր պլաններ ու ծրագրեր ունեն, — իմ հետագա կրթության, իմ ապագայի մասին... — ասաց ու փայլուն-սևորակ աչքերը ավելի պայծառ շողացին... — մայրը սրբում է արցունքներն ու շարունակում: — Վանու (այսպես է մայրը դիմում Վանուշին, և միշտ ներկա ժամանակով) շատ վաղ սկսեց իր գրպանի դրամը վաստակել: Նրա համար պատվելի էին բոլոր արհեստները: Լավ գլուխ էր հանում տեխնիկայից: — Մի օր էլ տեսնենք՝ ավտոմեքենաների հերթ է մեր բակում, — գրուցին է միանում Սոֆյա տատիկը, — Վանուշը հերթով «բուժեց» բոլոր «վիրավոր ու հիվանդ» մեքենաները և քաղցր ժպիտով ձանապարհեց ընկերներին ու համագյուղացիներին: — Վանու շատ պայծառ մարդ էր, ուղղակի կյանք... արցունքների միջից ասում է մայրը, — նրա ներկայությամբ տունը լրջվում էր սիրով ու ջերմությամբ: Ներս մտնելիս ու տնից դուրս գալիս անպայման զրկում էր ինձ, համբուրում և ասում. —

Մամ ջան, ամեն ինչ լավ է լինելու, չվախես: Վանու շատ ուշադիր էր շրջապատողների նկատմամբ. երբեք չէր ուզում հոգս պատճառել որևէ մեկին, միշտ տվողի, օգնողի, աջակցողի դերում էր, միշտ թույլի ու արդարի կողքին էր: — Երբ էր հասցրել այսքան շրջապայց ու խորագետ լինել... — հայացքը պատից ժպտացող գեղեցկատես զինվորին, — ասում է մայրը մեկ տարվա մեջ լրիվ ձեռնակած Վահրամը:



Եկավ բանակ մեկնելու օրը, դա հուլիսի 27-ն էր 2020 թ.: — Ոչ մեկիդ արցունքը չտեսնեմ, — ասաց, ու համբուրեց սիրասուն քույրիկներին Սոֆյային և Հասմիկին, նրանց բախկներին, տատիկին, հորը... ասա մոտեցավ մորը, գրկեց գետնից բարձրացրեց ու սկսեց պտտվելով կանչել... — ջացես, թե չէ՛ ցած չեմ դնի, — ասաց ու ժպիտը դեմքին վազեց — միացավ իր երամին, այն երամին, որն ընդամենը երկու ամիս հետո չվեց երկինք ձերմակ աղավինների տեսքով... — Պատերազմ էր այդ արհավիրքի անունը: Այս անգամ էլ այդ հրեշն անցավ մեր երկրով ու սրբեց — տարավ մեր ազգի ծաղիկը: Օտղարթա փ էր աշնան օրով: ...Բսկ մինչ այդ՝ անվանական էր. — Վանուշ Վահրամի Հարությունյան. — Ներկա: Օտարյուն եմ Հայաստանի Հանրապետությանը: Օտարյեց Հայրենիքին՝ Արցախի Մարտակերտ քաղաքում, ունեցավ շատ ընկերներ, եղավ բոլորի սիրելին: Բարի, մշտաժպիտ, գեղատես ու շնորհաշատ, ուշիմ ու պատրաստակամ զինվորը, իր շատ զինակից եղբայրների հետ նահատակվեց ի փառս Հայրենիքի, որպես հայոց բանակի քաջ զինվոր: Չոհվեց որպես իր երկրի «Փոքրիկ իշխան», որի երազանքն էր շենացնել, կառուցել ու պահպանել, սիրով ու բարությամբ լցնել իր մուրդակը: ...Մակայն 2020 թ. սեպտեմբերի 27-ին այդ Լույսը նետահար եղավ աշնան երկնքում: ...18 գարուն ապրած իմ լույսի որդի, որ երկինք թևեցիր, ձերմակ աղավինների քո երանով: Գնացի ր՝ մահին անտարբեր, դավին անտեղյակ... — Երանի քեզ, որ գնացիր հաղթած, երանի քեզ, որ մնացիր անպարտ քո բարձունքում: Գնացիք, որ մենք ավելի հաճախ նայենք երկինք, հաճախ ժպտանք մեզ աչքով անող ձեր հոգի-Աստղերին, և որ միշտ հիշենք, որ աստղերի տեղը երկնքում է... Կապույտ ու խաղաղ երկնքում:

«ՄԱՅՐԵՆԻ ՊԱՇՏՊԱՆ» ԾԱՐՔԻՑ

ԵՎ ԽՈՍԵՆՔ ՀԱՅԵՐԵՆ



ՀԱՅԵՐԵՆ
Մե՛կ շուրջը լեզուներ նոր ու հին, Մեր շուրջը խոսում են այրերեն, Եկ խոսենք, եղբայր իմ, Հայերեն:
Կու՛յ չեթանք այս ահեղ լափումին, Թու՛յլ չտանք մեր լեզուն ավերեն, Եկ խոսենք, միշտ խոսենք, Հայերեն:
Մենք ունենք աշխարհում Մասիս սար, Այդ սարը գալիս է դարերին, Նա անվերջ խոսում է Հայերեն:
Ջավակիդ հայկազյան դպրոց տար, Ե՛վ գրենք Մեթոդայան տառերով, Եկ խոսենք մեր անուշ Բառերով:
Մեր հանդեպ ապագա լուսեղեն, Թող հնչի մեր լեզուն վեհորեն, Թող այրվի մեր հեգին Այդ հրեն:
Մե՛զ ցրեց մի բազուկ անօրեն, Թե կուգես սերունդներ մեզ ներեն, Մենք հայ ենք, եկ խոսենք Հայերեն:
Այս օտար աշխարհի ցրտերում Եկ սիրենք մեր լեզուն ջերմորեն, Եկ վառենք ու վառվենք Հայերեն:



ԽՈՍՔ ԻՍ ՈՐՊՈՆ
— Լսի՛ր, որդիս, պատգամ որպես Միտղոս քո մոր խոսք սրտանց, Այսօրվանից հանձնում եմ քեզ Հայոց լեզու և հազարազանձ: Կտրել է նա, հանց աստղալույս, Երկինքները ժամանակի, Շառաչել է խոռվահույզ Սյացքի հետ հայկյան նետի, Ո՛հ Մեթոդայի սուրբ հանձնարով Դարձել է գիր ու մագաղաթ, Դարձել է հոս ցու, դարձել դրոշ 2, Պահել էրթը մեր անաղարտ... Նրանո՛վ է մրմնջացել Հայ պանդուխտը վերքն իր սրտի, Նրանո՛վ է որոտացել Կո՛վի երգն իմ ժողովրդի, Նրանո՛վ է մայրս ցանել Ինձ օրորոց դրել մի օր, Հիմա՛ն եկել, քե՛զ է հասել Նրա կարկաչը դարավոր... Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգի՛ն, Ժիր դայալի ի, ի՛մ սիրասուն, Թող մանկանս՝ քո շուրթերին Մեր պեղեք ր հայոց լեզուն... Պահի՛ր նրան բարձր ու վճիտ, Արարատի սուրբ ձյունի պեռ, Պահի՛ր նրան սրտիդ մտիկ, Քո պապերի աճյունի պեռ, Ո՛հ ոտխի գարկիցը սև Դու պաշտպանի՛ր կրծքով նրան, Ինչպես մո թղ կապաշտպանես, Թե սո՛ւր քաշեն մորդ վրան, Ո՛հ տե՛ն, որդիս, ո՛ւր էլ լինես, Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս, Թե մո՛րդ անգամ մտքիցդ հանես, Քո մա՛յր լեզուն չմոռանա՛ս: Միլվա Կապուտիկյան

Խաչիկ Դաշտենց